ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 1 (6), 1941 թ. Երևան

ՄԻՆԱՍ ՀՅՈՒՍՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

1

Ստ. Զորյանն իր բեղմնավոր գրական գործունեության ընթացքում շոշափել է բազմապիսի թեմաներ, որոնք կարելի է համախմբել հեռևյալ ընդհանուր վերնագրերի տակ.—գավառի և մասամբ քաղաքի մանր մարդկանց բարքերն ու տիպերը, գյուղը, նահապետական անհետացող տիպեր, պատերազմի հետևանքները, պատերազմի և ռևոլուցիայի ազդեցությունը մանրբուրժուական խավերի վրա և այդ ազդեցության տակ նրանց վերափոխման պրոցեսը և սոցիալիստական առօրյան։

Մանր մարդկանց ներկայացնող ամենարնորոշ նովելներն են՝ «Բարեկամներ», «Օրիորդ Մարիամը», «Զերմաչափը», «Դարդարար Հակորը», «Ժամկոչ Անտոնը», «Շաքաքաման», «Վերակացուն» և այլն։ Ընդհանրությունն այս կարգի տիպերի մեջ այն է, որ նրանք խղճուկ, անճարակ մարդիկ են, իրենց մտածողությամբ, իրենց ձգտումներով, իրենց հասարակական դիրքով ծայր աստիճան մանր, կամքի արտահայտությունից, նախաձեռնությունից, սկզբունքից գրեթե զուրկ և գտնվում են մի տեսակ քարացած վիճակում։ Այդ կյանքում ամեն ինչ հավիտենական անշարժության մեջ է, լճացման մեջ։ Սովորույթների և նախապաշարմունքների ազդեցության տակ ճնշվում, ոչնչացվում է ամեն մի ձգտում, մարդը՝ օրորոցից մինչև գերեզման՝ շղթայված է, սովորույթի ուժը օրենքի ուժ է ստացել և միանգամ ընդմիշտ որոշվել է ամեն տեսակ հարաբերությունների մի շրջանակ, որից դուրս ցատկելու ամեն մի փորձ պատժվում է այդ մարդկանց անճարակության հետևանքով։

Այդ մանր մարդկանց նկարագրելիս՝ հեղինակը չի գործադրում խիստ մերկացնող մեթոդ, այնքան, որքան այդ մարդիկ իրենք հանդիսանում են սոցիալական անարդար կարգերի զոհեր. ծաղրելուց առաջ պետք է նրանց խղճալ, ափսոսալ մարդկային էության այդ աստիճան մանրացման, քաղքենիական ոգության և մտավոր աղքատության համար։ Այդ է պատճառը, որ Զորյանի նուրբ հումորը հաճախ աննկատելի, թերես նույնիսկ իրեն համար, փոխվում է կարեկցանքի, խղճահարության։

Գյուղը Զորյանի ստեղծագործությունների մեջ բավական տեղ է գրավում։ Գյուղի վիճակը տարբեր նովելներում դիտված է տարբեր տեսանկյուններով։ Այդ նովելների շոշափած թեմաների համադրումը կարող է տալ 20-րդ դարի առաջին քառորդի հայ գյուղի հարաբերականորեն ամբողջական պատկերը։

Գյուղի սոցիալական հարաբերությունները, գյուղի կյանքը շատ կողմերով արտացոլված են «Ծովան» նովելի մեջ։ Գյուղացու դրությունը, նրա խղճալի, կիսաանասնական կյանքը, տգիտությունը, մանր սեփականության ամուր կառչելը, իմ—քոյի տարիներ տևող և միշտ նոր սրությամբ արծարծվող վեճը, ընտանեկան բարքերը, տիրոջ և ծառայի հարաբերությունները նկարագրված են այս նովելի մեջ ճշմարտացի, համոզիչ և ընդհանրացված գույներով։ Գյուղացու դրության մի շարք այլ կողմեր վեր են հանված հետևյալ նովելների մեջ. «Ծեծի օգուտը» (գյուղացու իրավազուրկ վիճակը), «Ինժեների մայրը» (շահագործման մեթոդներից մեկը), և այլն։

Չնայած գյուղի մասին գրված բազմաթիվ երկերի, այնուամենայնիվ հայ գյուղացու հոգեբանությունը մեր դրականության մեջ շատ քիչ է դրսևորված։ Զորյանը այս ուղղությամբ արել է որոշ քայլեր։ Այս տեսակետից ուշագրավ է մանավանդ «Սատանա» նովելը՝ մեկը Զորյանի ամենահաջողված նովելներից։ Գյուղացի երիտասարդի կերպարը, նրա ներքին աշխարհը, նրա գարմանալի միամտությունը, նրա դատողություններն ու հասկացողությունները տրված են շատ բնորոշ և կենդանի գույներով։ Այս նովելի մեջ դրսևորվել է հեղինակի պատմելու, կառուցելու տաղանդը և նուրբ դիտողականությունը։ Այստեղ Զորյանը գործադրել է տիպիկ կերտման իր մեթոդներից մեկը, այն է՝ երևույթը հերոսի հոգեբանությամբ և ըմբռնումներով ներկայացնելը, և հասել է հիանալի արդյունքի։

Հոգեբանական խորը և հուզական նովել է «Անհայտ թելերը»։ Գեղջկուհու մայրական պարզ, բայց ջերմ սերը նկարագրված է սքանչելի հասակությամբ, քիչ, բայց բնորոշ գույներով։ Գյուղացու մանր-սեփականատիրական հոգեբանությունը հաջող է պատկերված «Ցանկապատն» մեջ։ Այդ տրքի նովելների մեջ հեղինակը նկարագրում է նաև գյուղական քահանաների տիպեր, ծաղրում է նրանց ագահությունը («Տնօրհնեք»), տգիտությունը («Հայր Ամոնը»), վատասիրությունն ու ոչնչությունը («Տեր Հայրապետը»)։

Գյուղին նվիրված նովելներից են նաև «Սպիտակ տան բնակիչները», «Պապն ու թոռը» և «Ծեր Սոսին»։ Այս նովելների մեջ լիրիկական քնքշությամբ են պատկերված անհետացող նահապետական տիպերը։ Այս երկերի մեջ հեղինակը մարդկանց գիտում է բնության մեջ, մարդու կյանքը կապում է բնության հավերժության հետ, որպես նրա մի մասնիկը։

Զափազանց հուզական և գեղեցիկ նորավեպ է «Հանեսը», որի մեջ Զորյանը յուրատիպ ձևով պատկերել է ընտանեկան այլասերված բարքերի զոհ հանդիսացող մանկան ողբերգությունը։

2

Եթե անցյալ դարի 80-ական թվականներին ռեալիզմի առաջ դրված էին կնոջ ազատության, կնոջ իրավունքների պաշտպանության և ապահարզանի խնդիրները, ապա 20-րդ դարի երկրորդ տասնամյակի ռեալիստ հեղինակը, ընտանեկան բարքերը նկարագրելիս՝ հանդիպում է ամենուրեք կապիտալիզմի ազդեցության տակ ընտանիքի այլասերման, անբարոյականացման։

Կապիտալիզմի այլասերող, անբարոյականացնող ազդեցությունը նկարագրված է «Կրակ» վիպակում։ Այս վիպակի մեջ հեղինակը նկարագրում է անառականոցի բացումը մի փոքրիկ գավառական քաղաքում։ Երկաթուղուց հետո, որը մանր գործատերերի համար բերեց անաեսական փլուզում, սա երկրորդ խոշոր երևույթն է այդ քաղաքում, որը բերում է բարոյական փլուզում։ Երևույթը նոր է և անսպասելի, դեռևս տիրում են նահապետական բարքեր, «կողմնակի» ոերը դեռ անծանոթ է մարդկանց, պարկեշտությունը, համեստությունը համարվում են կանանց զարդեր... և հանկարծ քաղաք են մտնում մերկ, շպարված կանայք և ամոթխած քաղաքացիների առաջ փռում են իրենց, ինչպես կասեր Զոհրապը, «վաճառիկ հրապույրները»։ Այդ տիզմի մեջ են ընկնում հետզհետե մեծ թվով զոհեր։ Դրանց շարքին է դատկանում իր ընտանեկան հարկը միայն ճանաչող դերձակ Օհաննեսը, որի ընտանեկան դրաման նյութ է ծառայել այս վիպակին։

Օհաննեսի կինը, Մարիամը, ամեն կերպ ուզում է փրկել ամուսնուն, դիմում է զանազան միջոցների, բայց կիրքը տանում է Օհաննեսի «կամքը, ինչպես վայրի ձին հեծվորին», տանուլթամյա կապուտաչյա Լիզայի կանչող ժպիտը, հրավիրող հայացքը նորից և նորից ձգում են նրան։

Վիպակի գլխավոր հերոս՝ Մարիամի տիպը վերին աստիճանի բարդ է։ Նրա հոգեկան ապրումները, նրա հոգեբանական բարդ անցումները չեն ենթարկվել անհրաժեշտ մշակման, տիպի զարգացումը հետևողականորեն չի տրված, սակայն հեղինակին ընդհանուր առմամբ հաջողվել է տալ խանդի ազդեցության տակ Մարիամի ունեցած ապրումները, որոնց աստիճանական զարգացումը տանում է նրան մի վճռական քայլի. Մարիամը որոշում է այրել պոռնկանոցը։ Այս քայլին նախորդող հոգեբանական երևույթների վերլուծությունը վիպակում տրված է հմտությամբ։

«Կրակ» վիպակը գրված է Զորյանի գրական գործունեության առաջին շրջանում (1916—1919) և միակ երկն է, որի մեջ համակերպվող, զոհ լինելու հակամետ հերոսների փոխարեն՝ նկարագրվում է բողոքող, ընդվզող կնոջ տիպը։

3

«Պատերազմ» ժողովածուն, ըստ հրատարակության երրորդը, հեղինակի ստեղծագործության մեջ նոր էտապ է հանդիսանում ոչ միայն իր հասարակական-գաղափարական նշանակությամբ, այլև արվեստով ու էմոցիոնալ հագեցվածությամբ։ Այս ժողովածուի մեջ ակնառու է հեղինակի աճը, հեղինակի ներքին շահագրգռվածությունը նկարագրած երևույթների նկատմամբ։ Փոխվում են Զորյանի հերոսները, լայնանում է նրանց մտահորիզոնը։ Հեղինակն այս ժողովածուի մեջ նկարագրում է ոչ թե պատերազմը, այլ նրա թողած հետևանքները մասնավորապես գյուղի վրա։ Ժողովածուի ամենասավար և հաջողված պատմվածքն է «Պատերազմը»։ Զորյանի այս կարգի երկերի հաջողության պատճառն այն է, որ նա նկարագրում է իրեն շատ լավ ծանոթ կյանքը։ Բացի դրանից՝ նա երևույթը դիտում է այդ միջավայրը բնորոշող հոգեբանությամբ, դատողություններով. այս ձևով հեղի-

նակը կարծեք վերանում է, և ընթերցողը գործ ունի սոսկ երևույթների և նրանք կրողների հետ։

Պատմվածքի թեման հետպատերազմյան համաշխարհային գրականության բազմիցս շոշափած թեմաներից է։ Դա երիտասարդ զինվորի ողբերգությունն է, որը դժբախտություն է ունեցել պատերազմի դաշտում չմեռնելու։ Նա տուն է վերադառնում խեղանդամ, իր ցավի ամբողջ դառնության գիտակցության տակ ճզմված, բայց հեռավոր մի հույս, մի թանգագին շղթա դեռ նրան կապում է կյանքին—այդ նրա կինն է։ Սակայն որքան ահավոր է լինում նրա հոգեկան փլուզումը, ինչպիսի՜ ծայր աստիճանի է հասնում նրա հուսահատությունը, երբ այդ վերջին հույսն էլ կտրվում է։ Կինն ամուսնացել է ուրիշի հետ. «Օտարականի պես կանգնել էր Դավիթը սենյակի մեջտեղ և չորս կողմն էր նայում»—ասում է հեղինակը։ Պարզ, բայց հուզող տողերով է նկարագրել հեղինակը Դավթի ապրումները։ Առանձնապես հաջող է գյուղացի մոր կերպարը. նա անսահման բարության, քնքշության, նվիրվածության մի տիպար է. որքան իդեալական պարզություն, գուրգուրանք և սեր կա այդ նահապետական մոր մեջ, միևնույն ժամանակ, որքան բարձր, անկեղծ և ինքնաբուխ հումանիզմով է օժտված այդ աշխատավոր կինը։

Իր հարուստ և խորաթափանց դիտողության շնորհիվ Զսրյանին հաջողվել է պատերազմի հետևանքները նկարագրել տարբեր կողմերով։ Պատերազմի զոհեր են հանդիսանում ոչ միայն նրա անմիջական մասնակիցները, այլև նրանք, ովքեր, թիկունքում նստած, թվում է թե ոչ մի առնչություն չունեն պատերազմի հետ։ Տիկին Մարին, «Շուկայում» հուզական նորավեպի հերոսուհին, պատերազմի ղատճառով զրկվել է իր ամուսնուց և նրա հետ՝ նաև ապրուստի միջոցից։ Նա ստիպված է վաճառել իր տան իրերը, սկզբում ուրիշների միջոցով, ապա անձամբ։ Առաջին անգամ շուկա դուրս գալն արտասովոր է նրա համար և տանջալից, նա ամաչում է, կարմրում։ Մարին գեղեցիկ կին է, նրա գեղեցկությունն ավելի է դնահատվում, քան իր վաճառած իրերը։ Մարին ամեն կերպ դիմադրում է, «բայց երեխաները հաց են ուզում», և նա ընկնում է մեկի գիրկը։ «Տիկին Մարին ընդունում է նրան քաղաքավարությամբ, իսկ երեխաները նրան «քեռի» են ասում։ Բայց մի բան տարօրինակ է թվում նրանց՝ երեխաներին, որ քեռու գնալուց հետո մայրիկը միշտ լաց է լինում ...»։

Այս ժողովածուի հաջողված նովելներից են նաև «Երդը», «Զրհորի մոտ» և «Օհանի մահը»։ Սրանք, ինչպես և «Ինվալիդ» նովելը միևնույն գաղափարական առանցքի շուրջն են դառնում։ Դա աշխատավորական տարբերի հումանիզմն է, աշխատավոր ժողովրդի եղբայրական համերաշխության գաղափարը, որ, հակառակ ազգային պատնեշների, հակառակ արհեստականորեն իրար դեմ ստեղծված թշնամական բանակների՝ գտնում է իր ելքը։

Օհան ամու տղային թյուրքերն սպանել են Ղարսում, այժմ թյուրքական բանակի նահանջից հետո, Օհան ամու տանն է հասցել մի թյուրք զինվոր. վրիժառության հնարավորությունը պատրաստ է, Օհան ամին վաղուց որոճում է այդ միտքը, բայց վիրավոր զինվորի արցունքներն ստի-

պում են իջեցնել բարձրացրած կացինը, բուժել նրա վերքերը և սեփական կյանքի գնով ազատել նրան։ Ահա կանգնած են դեմ դեմի թշնամի բանակները («Ջրհորի մոտ»), շոգ է, ծարավ են, Ջրհորն իր մոտիկությամբ ծաղրում է առավել համարձակներին ու անհամբերներին և նրանք աստիճանաբար մոտենում են Ջրհորին, սառչ մեկ, ապա մյուս կողմից, հետո գալիս միանում են, իրար հյուրասիրում, իրար հասկանում են առանց իրար լեզուն իմանալու և ուրախ են, ժպտում են, ծիծաղում... «Ես մինչև հիմա էլ չեմ հասկանում, թե ինչի՞ էինք ծիծաղում... էնքան գիտեմ, որ ուրախ էինք, շատ էինք ուրախ...»—ասում է պատմվածքի հերոս Բաղդասարը։ Այդ ծիծաղը, այդ ուրախությունը հենց այն հոգեկան բավականության արտահայտությունն է, որ առաջանում է նրանց խորապես մարդկային զգացմունքից, նրանց իսկապես թշնամի չլինելու զգացմունքից։

Հայերը և թուրքերը կռվում են Շուշում («Երգը»), ինչու են կռվում, իրենք էլ չեն հասկանում, բայց «թշնամիներ են», կռվում են դիշեր-ցերեկ, բայց ահա մի երգ, հասարակ մի երգ կանչում է նրանց համերաշխության, ստիպում է զենքը ցած դնել և մի ամբողջ գիշեր այլևս չկրակել։ Նույնքան հուզական պատմվածք է «Ինվալիդը»։ Հայկական բանակը գրավում է թուրքական մի գյուղ, զինվորներից մեկը մոտենում է հայերին հայհոյող մի կնոջ սպանելու, սակայն երբ կինը բաց է անում իր շուրջը փռված ամուսնու և զավակների դիակները, ցույց տալիս իր կուրծքը, զինվորը հիշում է իր մորը, զենքն իջեցնում և շվարած կանգ է առնում մարդկային այդ թշվառության առաջ։ Պատերազմական «օրենքներով» զինվորը «հանցանք» է գործել, հրամանատարը խփում է նրան, և զինվորը զրկվում է իր մի ոտից։

Այս նշած նյութերից արդեն պարզ է դառնում «Պատերազմ» ժողովածուի ակնառու տարբերությունը նախորդ ժողովածուներից։ Այստեղ ավելի լայն է հեղինակի տեսադաշտը, ավելի հասուն նրա գրիչը. այն անտարբերությունը, որ զգացվում էր նրա առաջին շրջանի որոշ գործերի մեջ, այստեղ չկա այլևս։ Հեղինակն արդեն դիտե ընթերցողի ապրումները կազմակերպել, գիտե ջերմություն և հուզականություն դնել իր գործերի մեջ։ Այս ժողովածուն նշանակալից է նաև այն տեսակետից, որ որոշակի բեկում է ստեղծում գաղափարական հագեցվածության տեսակետից և անցման կամուրջ հանդիսանում դեպի ռեոլուցիոն թեմատիկան։

Զորյանը, որպես ռեալիստ հեղինակ, հետևում է դեպքերի և մարդկանց զարգացմանը, վերափոխմանը և ռեալիստորեն արտացոլում այդ ամենը։ Զորյանի հերոսներն իրենք ապրում են վերափոխման պրոցես։ Այդ վերափոխումը սկզբում տեղի է ունենում տարերայնորեն,—Օհան ամին («Օհանի մահը»), հայ զինվորը («Ինվալիդ») դեռևս չեն գիտակցում իրենց քայլի գաղափարական նշանակությունը, նրանց գործունեությունը թելադրվում է մարդկային-աշխատավորական հոգերանությամբ։ Այդ վերափոխման պրոցեսը գիտակցական է դառնում դեպքերի հասունացման ազդեցության տակ։ Պասսիվ, կամազուրկ մարդիկ ոչ միայն անցնում են դիմադրության, այլև պայքարի։ «Վախը» նորավեպի հերոս Դանիելի կերպարով տրված է այդ անցումը։ Ցարական բանակի սպայության գաղանություններից փախ-

չելով՝ Դանիելը քաղաքացիական կոիվների տարիներին անցնում է ռևոլուցիայի կողմը և հետապնդում հատկապես սպաներին։

4

Ստեփան Զորյանն իր գրական գործունեության երկրորդ շրջանով՝ պատկանում է սովետական գրականությանը։ Սակայն առաջին և երկրորդ շրջանների միջև չի կարելի չնկատել որոշակի կամուրջ։ Այդ կամուրջը նկատելի է և ստեղծագործական մեթոդի փոփոխման, և՝ աշխարհայացքի ռևոլուցիոնացման պրոցեսի մեջ։ Նկարագրական ռեալիզմից՝ ինչպիսին էր նրա գրական ուղղությունն առաջին և երկրորդ ժողովածուների նովելների մեծ մասի մեջ՝ Զորյանը հետզհետե անցնում է քննադատական ռեալիզմի տարրերի գործադրման («Կրակ»-ը, «Պատերազմ» ժողովածուն), իսկ հետագա երկերի մեջ նկատելի է նրա անցումը դեպի սոցիալիստական ռեալիզմը։ Գաղափարական և ստեղծագործական այդ զարգացումը տեղի է ունենում աստիճանաբար, իրականության փոփոխման հետ միասին։

Զորյանի՝ «մանր» մարդկանց աստիճանական փոփոխման լավագույն հայելին «Պատերազմ» ժողովածուն է։ Այստեղ փոխվում են մարդիկ, փոխվում են նրանց մտածողությունն ու հոգեբանությունը, փոխվում է նաև Զորյանի վերաբերմունքը դեպի կյանքը։ 1919 թվին Զորյանն ավարտում է «Կրակ» պատմվածքը, որի մեջ դուրս է բերում հակադրվող հերոսուհու տիպ։ «Պատերազմ» պատմվածքի մեջ արդեն երևում է դասակարգային հակադրության մոմենտներ։ «Վախ»-ի հերոս Դանիելը մղում է գիտակցված պայքար, սակայն նա անցել է ռևոլուցիայի կողմը, կարծեք, վրեժից դրդված։ Այդ կերպարի մեջ դեռևս չի երևում կազմակերպված ռևոլուցիոնները, սակայն այդ կերպարը անցման կամուրջ է հանդիսանում դեպի Հովսեփը («Հեղկոմի նախագահը», 1923 թ.)։

«Հեղկոմի նախագահը» Զորյանի առաջին երկն է, որ պատկերում է Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար տարվող պայքարը։ Հեղինակն այս նշված գործերի մեջ կյանքն արդեն դիտում է զարգացման պրոցեսում, լինելիության մեջ, բոլորովին հակառակ իր առաջին շրջանի որոշ գործերի, որոնց մեջ կյանքը լճացած է, անշարժ։ Զորյանի հերոսների զարգացման ուղին բարդ է և հետաքրքրական։ Ծեր Պոդոսից («Բարեկամներ») մինչև Հովսեփը («Հեղկոմի նախագահը») անճանաչելիորեն փոխվում է ամեն ինչ. անճարակ, անսկզբունք, կամքից և պայքարելու որևէ ցանկությունից զուրկ անձնավորության փոխարեն՝ որոշ գաղափարի նվիրված և այդ գաղափարի իրականացման համար վճռական պայքարի պատրաստ հերոսներ։

Հովսեփը հին ռևոլուցիոներ է. տարիներ շարունակ նա զգացել է իր կնոջ խնամքն ու հոգատարությունը։ Միևնույն ժամանակ նա սիրում է նրան, սակայն ռևոլուցիոների պարտականությունն ստիպում է նրան զոհաբերել այդ սերը։ Իր կնոջ եղբայրները հականեր են, նրանք մասնակցում են հակասովետական հեղաշրջման նախապատրաստմանը, նրանց պետք է գնդակահարել։ Հովսեփի մեջ պայքարում են դեպի իր կինը տածած սիրո և ռևոլուցիոների պարտքի զգացմունքները. նա շատ լավ գիտակցում է, որ

իր կինը դաղափարապես հասունացած չէ և դրանից հետո չի կարող իրեն սիրել, որ նրանց մեջ կստեղծվի անջրպետ, այդ պատճառով նա ապրում է որոշ հոգեկան երկվություն, սակայն ռևոլուցիոնների պարտքը հաղթանակում է, և նա ստորագրում է հակառների գնդակահարման որոշումը։ «Հեղկոմի նախագահը» ժամանակի առումով առաջին արձակ երկն է սովետական թեմատիկայով և նշանակալից երևույթ է այն իմաստով, որ հայ արձակի պատմության մեջ հանդիսանում է շրջադարձային մոմենտ։

Զորյանի հետհոկտեմբերյան ստեղծագործությունների մեջ հատուկ նշանակություն է ստանում «Գրագարանի աղջիկը»։ Այս երկը թե իր հասարակական, թե գեղարվեստական արժեքի տեսակետից մինչև այժմ չի գնահատված ըստ արժանվույն։ Այս վիպակի մեջ նույնպես հեղինակը գործադրում է իր սիրած ստեղծագործական մեթոդը, այն է՝ ներանալ հերոսներից մեկի մեջ (գլխավոր հերոսի) և երևույթը պատկերել նրա ըմբռնումներով, դեպքերի գնահատականը տալ նրա հասկացողություններով։ Այս մեթոդը «Գրագարանի աղջիկը» վիպակում ստացել է իր ամենացայտուն կիրառումը և տվել է գեղարվեստական մեծ էֆեկտ։ Թեև հեղինակը երկն անվանել է «Գրագարանի աղջիկը», բայց գլխավոր հերոսը ոչ թե գրագարանի աղջիկն է՝ Վիկտոր Դանիելյանցը, այլ նրա մայրը. այդ ոչ միայն այն պատճառով, որ երկի մեջ սկզբից մինչև վերջ ներկա է մայրը, և ոչ այն պատճառով, որ մյուս կերպարները նույնպես ներկայացվում են մոր միջոցով, այլ այն պատճառով, որ դեպքերի ամբողջ հյուսվածքը տրված է մոր կերպարով, որ այդ դեպքերը գնահատված են մոր աշխարհայացքի և աշխարհըմբռնման միջոցով։ Հեղինակը, կարծես, մի կողմ է քաշվում, իր դրիչը հանձնում է այդ հերոսուհուն, և սա է գրում վիպակը, և հեղինակն այդ կատարում է այնքան հարազատորեն և համոզիչ, հերոսի ինքնացուցադրումը կատարված է այնքան բնական և ճշմարտացի, որ ներկայացվող կերպարը դառնում է վառ և կենդանի։ Մոր կերպարը Զորյանի ստեղծած հաջող կերպարներից մեկն է։ Այդ կերպարը իր հոգեբանությամբ, իր ապրումներով, իր դատողություններով ու արտահայտության ձևերով, գործածած լեզվով՝ համեմված ժողովրդական առածներով և ասույթներով, ժողովրդական լեզվի շարահյուսական խտացումների գործադրումով՝ վերին աստիճանի տիպականացված է և իր ժամանակի աշխատավոր հայ մոր կերպարի լավագույն կերտվածքն է հանդիսանում։ Այս տեսակետից նույնպես «Գրագարանի աղջիկը» ներկայացնում է գեղարվեստական մեծ արժեք։

«Գրագարանի աղջիկը» վիպակում հեղինակը կարողացել է սեղմ, բայց ընդգրկող գծերով տալ Փետրվարյան և հատկապես Հոկտեմբերյան ռևոլուցիայի ազդեցությունը Հայաստանում և այդ ազդեցության տակ խմորվող դեպքերը, որոնց աստիճանական զարգացումը բերեց Հայաստանում սովետական կարգեր հաստատելուն։ Փիչ, բայց բնորոշ շտրիխներով պատկերված է դասակարգային պայքարի դինամիկան, ռևոլուցիոն ուժերի աճումն ու զարգացումը, կոնտրռևոլուցիայի դիմադրությունը, այդ դիմադրության հաղթահարումը և ռևոլուցիայի հաղթանակը Հայաստանում։ Այս երկի առավելություններից մեկն այն է, որ ռևոլուցիան դիտված է իր լինելիության, իր աճման, զարգացման մեջ։ Հեղինակը կարողացել է ցույց տալ, որ շար-

ժումը, թեև սկզբում փոքրածավալ՝ ունի աճման հնարավորություն։ Հեղինակը դինամիկայի մեջ է դիտել նաև ռևոլուցիայի ազդեցությունը մանրբուրժուական խավերի վրա։ Մոր կերպարն իր աստիճանական զարգացման մեջ լոկ պրիզմա չէ, որի միջոցով դիտված է երևույթը. հեղինակին հաջողվել է այդ կերպարով ներկայացնել ժողովրդական զանգվածների հասարակական աճը։ Զնայած մայրը դեռևս չի գիտակցում դեպքերի քաղաքական իմաստը, բայց արդեն խախտվում են նրա կրոնական զգացմունքները, և նա հասնում է բուրժուազիայի էության ըմբռման՝ թեև յուրովի, պրիմիտիվ ձևով։ Սկզբում նա կուրորեն հավատում էր իր տանտիրոջը՝ Մեխակին—քաղաքի «պատվավոր» մարդկանցից մեկին, բայց շուտով հասկանում է, որ իր աղջիկը ճիշտ էր ասում, թե «հարուստները խիղճ չունեն, նրանք լավ են, երբ քեզանից օգտվում են, երբ իրանց համար բան ես անում, երբ խոնարհ ես։ Դրուստ որ... աչքերս բացվեցին» («Գրադարանի աղջիկը», 1934 թ. հրատ., էջ 79)։

Սեռմ գրելու արվեստը Զորյանը գործադրում է նաև «Գրադարանի աղջիկը» վիպակում։ Մեխակի, նրա կնոջ և երկու աղջիկների կերպարները տրված են սեղմ, բայց բնորոշ գծերով։ Այդ ընտանիքով ցուցադրված է բուրժուական ընտանիքի բարոյական անանկությունը, այլասերվածությունը։ Առանձնապես այդ շեշտված է Անիչկայի և Սոնիչկայի կերպարներով, որոնք ամեն օր շպարվում են և վազում հոմանիների որսի։ Այս երկու կերպարները, որոնք իրենց նախորդներն ունեն «Վահանի ցավը» նորավեպի մեջ, իրենց զարգացումն են ստանում «Սպիտակ քաղաքի» հերոսներից մեկի՝ Ռոզայի կերպարի մեջ։

Մոր կերպարից հետո ուշադրության արժանի է Վիկտորի կերպարը։ Այս կերպարը նույնպես ունի իր նախորդներն ու շարունակությունը հետևյալ ձևով—Դանիելը («Վախը»), Հովսեփը («Հեղկոմի նախագահը»), Վիկտորը («Գրադարանի աղջիկը»), Տիգրանը («Սպիտակ քաղաք»)։ Այս շարքի մեջ իր ռևոլուցիոն կոփվածությամբ, իր վճռականությամբ, արգելքները հաղթահարելու իր տոկուն կամքով՝ հատուկ նշանակություն է ստանում Վիկտորը։

5

Զորյանի հետհոկտեմբերյան շրջանի երկու այլ աշխատությունները «Վարդաձորի կոմունան» և «Սպիտակ քաղաքը» պատկերում են գյուղի ու քաղաքի սոցիալիստական առօրյան, գյուղի ու քաղաքի վերակառուցման, վերափոխման աշխատանքը։

«Սպիտակ քաղաքը» վեպի մեջ արծարծված են մի շարք պրոբլեմներ—քաղաքի սոցիալիստական շինարարությունը, սովետական ընտանիքի հարցը, հին և նոր սկզբունքների փոխհարաբերության խնդիրը։ Վեպի հիմնական գաղափարական առանցքը, որի շուրջը դառնում է սյուժեն—հին և նոր մարդկանց հին և նոր ըմբռնումների բախումն է, պայքարը։ Նորն արտահայտված է վեպի գլխավոր հերոս Տիգրանի միջոցով, հինը՝ Ռոզայի, Իլիասի, Միրյանի։ Տիգրանը կոմունիստ է. նա հավատում է իր գործին և ամբողջ հոգով նվիրված է դրան։ Ապագայի հեռանկարը նրա համար դար-

ձել է կիրք, որը կլանում է նրա ամբողջ էությունը։ Նա հավատացած է, որ նոր կենցաղը, նոր հոգեբանությունը հնարավոր է ստեղծել նոր պայմանների մեջ միայն, ուստի նա ձգտում է հիմնովին վերակառուցել հին քաղաքը, ստեղծել նոր՝ կոլեկտիվ ձգտումներին նպաստող բնակարանային պայմաններ, նոր տներ, որովհետև, ինչպես Տիգրանն է ասում՝ «հին տուն նոր պառավի նման նոր թարմ բան չի ընդունում իր մեջ... հին սովորությունները, հին կենցաղը, հին հոգեբանությունը, նախապաշարումներն ու տրադիցիաները հին տներում ավելի երկար են ապրում»։

Տիգրանի հակադրությունն է բուրժուական մտավորական Միրյանը։ Նա կյանքի վրա նայում է որպես մի ասպարեզի, որից պետք է առավելապես օգտվել։ Ամեն ինչ, որ հնարավոր է և կարելի է վերցնել՝ այդ թույլատրելի է համարում նա։ Կինը, փառքը, դրամը, ապրուստի և վայելքի բոլոր միջոցների ստեղծումը կազմում են նրա մտավոր ու հոգեկան ձգտումների բովանդակությունը։ Իր աշխատանքի հասարակական նշանակությունը, նպատակադրման դաղափարական կողմը նրան բոլորովին չի հետաքրքրում։ Բուրժուական մտածողության և բուրժուական բարոյականի տիպիկ ներկայացուցիչ է Միրյանը։

Բուրժուական դաստիարակության անդրադարձումը կնոջ հոգեբանության միջոցով տվել է հեղինակը Ռոզայի կերպարով։ Ռոզան և Միրյանը միևնույն մտածողությունն ունեն՝ վերցնել առավելագույնը կյանքից։ Իրենց եսի ձգտումների բավարարման համար նրանք կանգ չեն առնում որևէ խոչընդոտի առաջ, չունեն որևէ սրբություն, որևէ սկզբունք, որը կարելի չլինի ոտնահարել։ Գոյության պայքարը նրանք հասկանում են բիոլոգիական իմաստով, կյանքի հասարակական կողմը նրանց համար անըմբռնելի է։ Ռոզան այս վեպի ամենահաջողված տիպն է և դիտված է միջավայրի մեջ, նա իր մոր, իր քեռու և առհասարակ իր քաղքենիական-բուրժուական միջավայրի ծնունդն է։ Հեղինակին հաջողվել է Ռոզայի ողջ էությունն արտահայտել հետևյալ սեղմ, բայց տիպը միանգամայն ցայտուն դարձնող խոսքերի մեջ. «Պետք է կյանքը վայելել, милая, ասում է Ռոզան, երկրորդ անգամ աշխարհ չենք գալու»։ «Կյանքը ի՞նչ է, եթե ոչ—սիրել, լավ հագնվել, լավ զբոսնել, ճամբորդել. մնացածը դատարկ բան է. суета сует, ոնց որ կասեր քեռիս... Մարդուս լավ ապրելն է մնում։ Ինչ վերաբերում է երեխաներիդ—դրա համար է, որ չեմ ուզում երեխա ունենալ։ Ա՛յ, տեսնում ես, որ երեխան, մորս ասած, «ոտի կապանք է»...»։

Ահա այս կնոջ ազդեցության տակ է ընկնում Տիգրանի կինը՝ Աննան։

Աննայի կերպարը վեպի նպատակադրման տեսակետից չափազանց կարևոր է։ Այս կերպարի միջոցով հեղինակը ցույց է տալիս երկու ազդեցությունների առկայությունը՝ Տիգրանի և Ռոզայի։ Ինքը՝ Աննան, ինչպես երևում է Ռոզայի վերհիշումներից, պատկանել է նույն միջավայրին, ինչ որ Ռոզան. նա նույն հայացքներն է ունեցել, և եթե ամուսնացել է կոմունիստի հետ, ապա սոսկ այն պատճառով, որ ենթադրել է, թե կոմունիստներն ամենից լավ պիտի ապրեն։ Նրա կյանքը ամուսնական շրջանում ընթանում է համեմատաբար խաղաղ, երեխաները, ընտանեկան հոգսը կլանում են նրա ժամանակը և այլ հետաքրքրության ասպարեզ չեն թողնում։

Տիգրանն իր շիտակ, աղնիվ, կրքոտ բնավորությամբ դժգոհության որևէ առիթ չի տալիս։

Այդ խաղաղ կյանքի մեջ՝ Ռոզան իր «մեծ քաղաքի», ավելի ճիշտ կլինի ասել, բուրժուական սովորույթի հովերով ալեկոծում է մտցնում։ Այդ ընտանեկան կյանքը, որը Ռոզայի իդեալը չէ, անմիջապես դառնում է խոսակցության առարկա և Ռոզայի դատողությունների ազդեցության տակ՝ Աննայի մեջ վերականգնվում է նախկին կինը։ Ահա այստեղից սկսվում է ընտանեկան դրաման, որի հանգույցը հյուսվում է Աննայի ու Միրյանի սիրո շուրջը և լուծվում Տիգրանի ներողամտությամբ։ Տիգրանն Աննայի քայլը պաաճառաբանում է նրանով, որ վերջինս չի ընդգրկված հասարակական աշխատանքի մեջ, որի համար ինքն իրեն է մեղադրում և դրանով իսկ դանում Աննայի արդարացումը։

Անշուշտ, Տիգրանի կերպարի մեջ կան ռոմանտիկական տարրեր, ռոմանտիկական է նույնպես վեպի վերջավորությունը։ Վեպի վերջում Տիգրանն ավելի շուտ հեղինակի՝ այդ խնդրում ունեցած հայացքի կրողն է հանդիսանում, քան կենդանի մարդ։ Նրա վարմունքը՝ սիրած կնոջ դավաճանությունն այդպես շուտ և առանց տանջանքների ներելը՝ գեղարվեստորեն չի պաաճառաբանված։ Շատ ավելի ռեալիստորեն է տրված բուրժուական ընտանիքը՝ հանձինս Ռոզայի և Իլիասի։ Իլիասը նայում է իր կնոջ վրա լոկ որպես հաճույքի առարկայի և գոհ է նրա կոկետությունից։ Ռոզայի քմահաճույքների կատարումը նույնպես հետապնդում է այդ նպատակը։

Այս վեպի հետաքրքրական կերպարներից է նույնպես աղախնու՝ Բուրաստանի կերպարը, որը դեռևս նահապետական բարքերի անաղարտությունը պահպանել է և ամբողջ հոգով հակակրում է «լպստած» Ռոզային, արտահայտելով միաժամանակ հեղինակի հակակրանքը։

6

Հեղինակի վերջին ստվար աշխատությունը «Մի կյանքի պատմություն»-ն է։ Վեպը դեռ չի ավարտված, սակայն գրված երկու գրքերը կարող են գաղափար տալ վեպի մասին։

«Մի կյանքի պատմություն»-ը սյուժետային կենտրոն չունի, գա մեմուարային վեպ է իր բոլոր առանձնահատկություններով։ Այս տեսակետից նա հիշեցնում է Շիրվանզադեի «Կյանքի բովից»-ը, այն տարբերությամբ, որ «Կյանքի բովից»-ն ավելի մոտենում է մեմուարի, իսկ «Մի կյանքի պատմություն»-ը՝ վեպի։ Այս վեպի մեջ Զորյանի վրձինը զանազան ներկեր ունի, ներկեր, որոնք հիշեցնում են հեղինակի անցյալ ստեղծագործությունը, և ներկեր, որոնք նոր են ու թարմ, Զորյանի ստեղծագործական ոճի մեջ նորություն է հատկապես վեպի մի մասը—փաստաբանի և իր կնոջ մասին եղած նկարագրությունը, որը հիշեցնում է բալզակյան ոճը։ Այս վեպի մեջ էլ հեղինակը մտցրել է մեծ մասամբ նովելիստ։ Կան գլուխներ, որոնք կարելի է դատել որպես առանձին նովելներ։

Գլխավոր հերոսը՝ Սուրենը, մասերն ու գլուխներն իրար կապող կենտրոնն է, որի շուրջը դառնում է վեպի հարուստ բովանդակությունը։ Այդ

բովանդակությունը 20-րդ դարի առաջին քառորդի հայ գավառացի երիտասարդի պատմությունն է։ Այդ գլխավոր հերոսի շուրջը հյուսվում են զանազան դեպքեր, դառնում են զանազան դեմքեր և ուրվագծվում քառորդ դարի պատմություն։ Այս վեպը հրաշալի գիրք է առանձնապես պատանիների համար, գրված է քնարական շնչով, տեղ-տեղ ջերմության և հուզականության սքանչելի օրինակներ տալով։ Այս վեպի մեջ հեղինակը նորից անդրադառնում է իր մանկական տարիներին, նկարագրում գավառական փոքրիկ քաղաքը, որն այնքան ծանոթ է Զորյանի ընթերցողներին։ Այստեղ նա ընդհանրացնում և ի մի է բերում իր տպավորությունները, սակայն հեղինակի հայացքները փոխվել են, փոխվել է նրա ստեղծագործական մեթոդը. Նա ոչ միայն արտացոլում է իրականությունը, այլև դատավճիռ է կարդում այդ իրականության նկատմամբ։ Նկարագրելով ժամանակի սոցիալական հարաբերությունները, նա ընդգծում է իր տենդենցը, բողոքում ցարական գաղութացման և ասիմիլյացիոն քաղաքականության դեմ, նկարագրում ցարական բյուրոկրատիայի ռեժիմը, հայկական դպրոցների փակումը և բռնի ռուսացման քաղաքականությունը։ Երկրորդ հատորում կյանքը շատ ավելի հախուռն է, անմիջապես աչքի է զարնում գավառի և մեծ քաղաքի տարբերությունը, զգացվում է քաղաքային կյանքի եռ ու զեռը, շարժունությունը, հակասությունները։ Երկրորդ հատորում մեծ տեղ է բռնում նաև բանվորական շարժման, ռևոլյուցիոն ընդհատակյա աշխատանքի նկարագրությունը։ Այս ընդարձակ աշխատության մեջ ընթերցողի աչքի առաջով անցնում են բազմաթիվ կերպարներ, որոնք ներկայացնում են գավառի ու քաղաքի կյանքը։

7

Տարիների ընթացքում Ստեփան Զորյանը ձեռք է բերել գրական զգալի կուլտուրա։ Այդ կուլտուրան արտահայտվում է նրա ողջ գրելակերպի մեջ։

Զորյանի արվեստի համար ամենից ավելի բնորոշն է պարզությունն ու բնականությունը—պարզություն լեզվի, ոճի, պատկերների և տիպերի կերտման մեջ։ Այդ պարզությունը ներդաշնակում է այն կյանքին, որի արվեստագետն է Զորյանը։ Զորյանն իր ողջ ստեղծագործական էությամբ իր միջավայրի ծնունդն է, նա չի կեղծում, չի խտացնում իր նկարագրած կյանքի գույները։ Զորյանի միջավայրը, այդ միջավայրից ստացած իր տպավորությունները հենց ատաղձ են հանդիսացել իր ստեղծագործությունների ոչ միայն տալով դեպքեր ու տիպեր, այլև պատկերավոր մտածողության հենք։ Դա ցայտուն կերպով երևում է Զորյանի պատկերավորության միջոցների մեջ, որոնցից բերենք համեմատության մի քանի օրինակներ.

«Երբեմն պապի գլուխը շարունակ դողում էր հասած արևածաղկի պես» («Պապն ու թոռը»)։ «Կաչաղակի բները ծառերի վրա» նմանեցված է «ճղների արանքն ընկած հովվի փափախի», կամ հետևյալ համեմատությունը «Օհանի սիրտը քցում էր ոնց որ խնոցի»։

Պատկերավորության միջոցներ շատ չի գործածում Զորյանը, նա

էֆեկտի է հասնում այլ միջոցներով, սակայն երբեմն Զորյանին հաջողվում է տալ պատկերավորության շատ յուրատիպ օրինակներ այսպես, օրինակ՝ ալիքները, որոնք «մռնչալով զարնվում էին միմյանց», համեմատված են «իրար կրծոտող շների» հետ, կամ ջրվեժը նմանեցված է «ժայռից կախված առասպելական միրուքի», որ «ցնցվում ու տատանվում է հովից»։ Վերին աստիճանի օրիգինալ է անձրևի նկարագրությունը—«կայծակը փայլատակեց, և նրա լույսի մեջ անձրևը թվաց երկնքից կախված առեղի թելեր»։

Զորյանը հաճախ ինքնատիպության է հասնում նաև հերոսների արտաքին նկարագրության մեջ։ «Վախը» նովելի հերոսներից մեկը—մի սպա՝ նկարագրված է հետևյալ ձևով. «կապույտ քիթ, գարու հասկերի նման բարակ շեկ բեխեր և թուխ, մսի մեջ կորած բութ աչքեր»։ Այս սեղմ նկարագրությունը հերոսի արտաքինը միանգամայն տեսանելի է դարձնում. այստեղ երևում է նույնպես գյուղական պատկերներով մտածելը—բեխերը՝ գարու հասկեր։ Սեռմ գրելու արվեստին Զորյանը հասնում է նաև արտաքին նկարագրությունների մեջ. հայկական լեռնային գյուղի տիպիկ պատկերը տրված է հետևյալ ձևով. «Մի նեղ ձորակի մեջ, սարի արևադեմ լանջին կպած, Կաղնուտը նայում է երկնքին»։ Հեղինակը բնորոշ, բայց խոշոր շտրիխներ է գործածում, վրձինի մեծ շարժումներ—նեղ ձորակ, սարի արևադեմ լանջ, որին կպած է գյուղը։ Գյուղի գիրքի պատկերացումն անմիջապես ստացվում է։ Շատ բնորոշ և յուրատիպ ձևով է տվել հեղինակը նաև իր ծննդավայրի ընդհանուր նկարագրությունը—«Սարերի արանքն ընկած փոքրիկ քաղաքը նոր կղիմինդրե տանիքներով նմանվում է խոր ափսեի մեջ լցրած խմորեղենի» («Հեղկոմի նախագահը»)։

Ինչպես այս պատկերների, նույնպես և տիպերի կերտման եղանակների մեջ երևում է Զորյանի հաջողության պատճառներից մեկը՝ նրա նուրբ դիտողականությունը։ Տիպերի կերտման իր երկու եղանակներն էլ—հերոսի մեջ ներանալը և տպավորությունների հաղորդման ձևը—հենվում են այդ նուրբ և զարգացած դիտողության վրա։

Իր տիպերի կերտման, նկարագրությունների, պատկերավորության միջոցների և առհասարակ ողջ գրելակերպի մեջ Զորյանը ռեալիստ է. իրականության զգայնությունը չափազանց ուժեղ է նրա մոտ։ Զորյանը հրապարակ եկավ այն ժամանակ, երբ հայ գրականության մեջ իշխում էր լալկան ռոմանտիզմը, երբ վերամբարձ ոճը և էժանագին, պաթետիկ զգացմունքները համարվում էին գեղարվեստականության ապացույցներ, բայց իրականության այդ ուժեղ զգայնությունը ցույց տվեց նրան միայն ռեալիզմի ճանապարհը։ Զորյանի ռեալիզմը նրա գրական գործունեության առաջին շրջանում վերին աստիճանի ժուժկալ է, հաճախ ավելի քան պետք է։ Այդ ժուժկալությունը երբեմն փնասել է Զորյանի ոճին, զրկել է այդ ոճը անհրաժեշտ պայծառությունից։ Սակայն իր լավագույն գործերի մեջ Զորյանը հասնում է ոճի յուրահատուկ պայծառության, պայծառություն, որի մեջ կա յուրատեսակ մեղմություն, նույնիսկ ցնցող տեսարանները մեղմանում են հեղինակի վրձինի տակ։ Վառ գույներ Զորյանը չի սիրում. նա կիսագույների հեղինակ է։ Այդ կիսագույներն էլ ողողված են ոչ թե արևի, այլ լուսնակի լույսով։ Զորյանի ոճին հատուկ է նաև քնարական

ջերմությունը, մանավանդ իր լավագույն գործերի մեջ նա հասնում է խոսքի և զգացմունքի բանաստեղծության։

Զորյանն արձակագիր է, բայց երբեմն հանդես է բերում բանաստեղծի հոգի։ Զորյանի պոետիկ զգայնության օրինակ կարող է հանդիսանալ «Պատնուկներ» արձակ, սքանչելի բանաստեղծությունը, որի մեջ մեծագույն քնքշությամբ նկարագրված են երեք որբ մանուկներ։ Զորյանը գիտե տեղին գործածել զգացմունքի նոտաներ և այդ շաղկապելով իր գրելակերպի պարզության հետ, հասնել ցանկալի էֆեկտի։ Դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ նա ունի մշակված ու կիրթ լեզու, և լավ գիտե իր նկարագրած կյանքը։ Այդ արտահայտվում է ոչ միայն նկարագրությունների, այլև հերոսների խոսակցության մեջ, որ վերին աստիճանի տիպիկ է և բնորոշ։ Զորյանի որոշ հերոսներ իրենց խոսակցության այդ տիպիկությամբ զարնում են ցայտուն և շոշափելի։ Հեղինակին հաջողվում է նաև բնության նկարագրությունը։ Անմիջապես զգացվում է, որ հեղինակը բնությանն անծանոթ մարդ չէ, որ նա ապրել է բնության թովչանքը, զգացել է նրա գեղեցկությունը։

Զորյանը գրել է վեպեր և նորավեպեր, սակայն նրա գրական փառքը կազմում են նորավեպերը։ Որպես նորավիպագիր, նա նվաճել է իր մնայուն և կարևոր տեղը մեր գրականության մեջ։

Զորյանի երկերը թարգմանված են մի շարք լեզուներով և ունեն ընթերցողների լայն շրջան։ Նրա, որպես գրողի, արժեքը գերաճել է հայ գրականության սահմանը և ստացել համամիութենական նշանակություն։

СТЕПАН ЗОРЯН

(РЕЗЮМЕ)

Степан Зорян является одним из выдающихся представителей армянской советской прозы.

Творческая деятельность Зоряна делится на два перида: дооктябрьский и послеоктябрьский. В первом периоде Зорян реалистично изобразил нравы „мелких“ людей города и провинции. Он показал трагедию угнетенных людей, находившихся под пятой царизма, национальной буржуазии и в оковах патриархальных нравов и предрассудков.

Одним из удачных сборников Зоряна является „Война“. В новеллах этого сборника автор изображает процесс постепенной переделки сознания мелкобуржуазных слоев общества под влиянием войны и революции.

Это изменение сознания масс под влиянием Великой Октябрьской революции ярко выражено в повестях—„Девушка из библиотеки“ и „Председатель ревкома“. Зорян в этих повестях изображает гражданскую войну и процесс установления Советской власти в Армении.

В своих последующих произведениях („Белый город“ и „Вардадзорская коммуна“ Зорян рисует социалистическое строительство города и деревни.

Большим событием является в армянской советской прозе роман Зоряна „История одной жизни“. В этом романе он воспроизводит жизнь армянского народа в условиях самодержавия за последние десятилетия.

Зорян—крупный новеллист. Он умеет в маленьких новеллах сжато и красочно показать целую полосу жизни в ее характерных чертах. Зорян—подлинный продолжатель традиций армянской классической прозы.

Произведения Зоряна переведены на многие языки народов Советского Союза и пользуются большой популярностью.

М. Июсян